

ՎԱՐՂԱՆ Վ. ԲԱՐՁՐԵՐԳԻ

Էջմիածնի Թ. 470 ձեռագրին մէջ գտած էի երկու չափական գրուածք, որոնք ընծայուած էին «Վարդան վարդապետի Բարձրբերդացոյ Կիլիկեցոյ»: Այս անունով մատենագիր մը կը յիշէ Յակոբ Նալբան, որ խօսելով Բարձրբերդի մասին կը գրէ. «որ էր ամբողջն բերդ մի պարսպաւոր ի Կիլիկիա. յորմէ էր Վարդան Բարձրբերդցի, այր իմաստուն եւ բանիրուն»¹: ԺԳ. դարուն բերդիս աէրն էր Կոստանդին Արքայահայր. իր որդին Յովհաննէս Պաղտին արքայեղբայր, բերդիս մօտերը կանոյց Գոնեբրի վանքը, ուր եւ կը բնակէր ինքը: Իր առաջնորդութեան շրջանին ծաղկեցաւ վանքս, ունեցաւ դասարան. եղաւ գրչութեան արուեստի Գպրոց:

Վարդանի յորջորջումը «Կիլիկեցի» կը դանազանէ զինքը Վարդան Արեւելեցիէն, Հաղարատացիէն եւ Մարաթացի-Այգեկեցիէն: «Բարձրբերդցի» կոչումը ցոյց կուտայ, թէ ինչպէս Կոստանդին Բարձրբերդցի Կաթողիկոս, նոյնպէս ինքը Բարձրբերդի շրջակայքի մէջ ծնած է: Վարդան իր «սնուցիչն եւ ուսուցիչը» կ'անուանէ Յովհաննէս Արքայեղբայրը. ուստի իր դաստիարակութիւնն առած է Գոնեբրի վանքին մէջ ի Կիլիկիա: Կը յիշէ նաեւ իր միւս ուսուցիչն «Յոսայի վարժապետ», որ Գլաճորի գպրոցին վարիչն էր: Հետեւաբար Յովհ. Արքայեղբոր մահէն († 1289) ետքը, իր 1300ին, անցած է Վարդան Սիւնեաց աշխարհը, շարունակելու իր ուսումը Գլաճորի «Համալսարանին» մէջ առ ոտս Յոսայի Նչեցոյ:

Իր գպրոցական կեանքի մասին են հետեւեալ տողերը, զորոնք գրած է «Սոցուած շատ ունիմ սրտիս» տաղին մէջ.

Ի մանկութենէ, եղբարք, հետ ուսման բանից կու դատիմ.
Ի սիրոյ տաղնայ կրեալ՝ ծարաւի հոգւով տոչորիմ.
Միշտ ահն ունելով համան յիմաստից դուռնն զեղերիմ:
Գերիս յանձմուտ անձանց անաչառ հարուածս ընդունիմ.
Ար իմ՝ խոցուս չեն գիտակ՝ զինչ պիտի նա գայն կու խօսին:

¹ Գիրք կոչեցեալ Գանձարան ծանուցմանց. Կ. Պալիս 1758, հատոր Գ., էջ 284:

Վարդան առ ոտս իր դաստիարակին՝ Յովհաննէս Արքայեղբոր սորված է նաեւ գրչութեան արուեստը. հասած են իր գրչէն հետեւեալ օրինակութիւնները.

1. Յովհաննէս Արքայեղբայր 1286ին օրինակել տուած է երեք գրիչներու Իգնատի Մեկնութիւնն Ղուկասու, Նանայի Մեկնութիւնն Յովհաննու, Անդրէասի Մեկնութիւնն Յայտնութեան եւ Ն. Լամբրոնացոյ Մեկնութիւնն Հանդստեան Յովհաննու. «Թուի կը գրէ Հ. Ալիշան, Սիսուան 147, թէ մի յերկոյ գրչաց իցէ Վարդան Բարձրբերդցի, զի է յիշատակ մի նորին ի մատենին, յորում ուսուցիչ իւր կոչէ զոյն ինքն զՅովհաննէս»: Յիշատակարանը յառաջ չէ բերուած. չէ ալ նշանակուած, թէ ուր կը գտնուէր ձեռագիրը²:

2. Էջմիածնի Թ. 470, որ կ'ամփոփէ իր ծոցը Գրիգոր Նիւսացոյ (Նեմեսիոսի) Յաղագս բնութեան եւ կաղմութեան մարդոյ, ունի յիշատակարաններս.

Թղ. 87բ. «Ձանուցիչ եւ զուսուցիչն իմ գտէր Յոհաննէս զեղբայր արքային Հայոց Հեթմոյ յիշեցէք ի Բրիստոս. եւ Աստուած զձեզ յիշէ:

Թղ. 115բ—116ա. «Չարփիական զերանդէս եւ զնեւածմունք բնաւին յընթացս ի վերնակառոյց իմաստութեանն զճաղաղ բանին երկիւղածաց, զվարժապետս իմ (զՅոսայի ջնջուած) ստացաւ զհամայն աստուածագիր վիպասիս (ա՛յսպէս) ծիրանափայլ հոգի վառմար յիմանալիս կրող հաւն լուսո զաւրբստաւրէն հաց իմաստութեան յարքաական սեղան ընդ բանին միացեալ յիշեցէք... եւ զինն տեսուն Յոհաննէս զեղբայր արքային Հայոց Հեթմո եւ զտարակացեալ գրիչս Վարդան Կիլիկեցի իմովքն... ամէն»: Կը յաջորդէ ծածկագրութիւն մը:

Թղ. 213ա. «Ձենթաղիւր արտակերտեալս ի վիստաւէն ի Գրիգորէ Նիւսեա արտաշարեալ զտիպն տերունեան... հրամանաւ իմոյ վարժապետիս Յոսայեա շարագան պարեցի զգերարուն զբախտս... զվերոսացեալ բարունիս մեր Իսայի հանդերձ ծնողաւք եւ ազգայնաւք անմոռաց մաղթել զիսկն բան... Ո՛ր եւ զինն տեսուն Յոհաննէս արքայեղբայր Հայոց Հեթմո յիշել... այլ

² Այս ձեռագիրը կ'ակնարկէ Հ. Ալիշան, Հաւաքունն Պատմութեան Վարդանայ վարժապետի Վեներիկ 1862, էջ Բ. «Արդէս յիշէ մատենագիրն ուն յամի 1286»:

եւ զիմս անարժան թախիժ մակացու գըրչողս զՎարդան Կիլիկեցի համայն ծնողաւք մեր եւ եղբարք...»:

Ձեռագիրս թէեւ թուական չունի, բայց գրուած ըլլալու է 1300էն ետքը Գլաճորի մէջ. Վարդան ինքզինքը Յովհ. Արքայեղբոր «տարակացեալ» աշակերտը կը ներկայացնէ:

3. Այս շրջանին, նոյնպէս Գլաճորի վանքը, գրուած է Յոսայի վարժապետի համար Գրիգոր Նիւսացոյ Մեկնութիւնն Ինն Երանութեանց եւ Հայր մերի (Էջմ. Թ. 749, դժբախտաբար առանց թուականի յիշատակութեան): Ինն Երանութեանց կից կայ Վարդանի յարասութիւնը ոտանաւոր չափով, որուն տնակապ գրերը կը կաղմեն «Վարդան»: Այս յարասութիւնն է (թղ. 109բ).

Վիմարդեան գլուխ բանի
Իննեակ թուով յաւէտ խօսի.
Տէրն է քարոզ բարձր վիմի.
Աշակերտացն Տեսուն Յիսուսի
Ահա ասել զՏեսուն ձայնի
Յոյժ աղքատացն երանելի,
Հոգւով լինել իբր զոսկի.
Մաքուր մարմնով մինչ ապակի:

Բախ լինել հեզ եւ բարի
Ժառանգ վերինն կայանի.
Հաւատ եւ յոյս է կենդանի,
Միշտ ելանել յերկիր բարի:

Դիտունն է լոյս զգայականի,
Սգաւորք լինել ի յաշխարհի.
Յորժամ հոգի Տեսուն հնչի
Միտթարիչ հոգւոց լինի:

Ահա քաղցեալքն երանելի
Որ ի սեղան Հօրն բաղմի.
Ատել զսէր այս աշխարհի,
Եւ ճաշակել զբան կենդանի:

Նախկնարար մեզ քարոզի
Յաստուածային Բան եւ Հոգի,
Թէ ողորմածն երանելի,
Տէր մարդասէր առ նա ձայնի³:

Կ'երեւայ թէ Ձեռագրին մէջ այստեղ թուղթ մ'ինկած է, ուր կը շարունակուէր յարասութիւնս «Կիլիկեցի Ա. Ս. ՆՍԱ. (Յի) տուներով:

³ Այս մասը Էջմիածնի Թ. 749էն լուսատիպ հրատարակած է Գարեգին Արքեպ. Յովսէփեան, Խաղարկեանք, Բ., էջ 217. հմտ. նաեւ էջ 214 եւ 9. 163—164:

Հաց քաղցելոյն ճաշակողի
Յառաջընթա ի յատենի:
Յորմէ Յիսուսն այն սոսկալի
Հատուցանէ զգործս բարի.
Նսայիս վարժապետի
Ձիմանալի հաց ծասկողիս.
Ի Վարդանա աշակերտի
Որ մեզ հայցէ առ Տէր ունի
Ձթողութիւն յաւիտենի,
Եւ ինքն գտցէ յաւիտենի:

Այս օրինակէն արտագրուած է 1317ին ի Գլաճոր Վեներիկի Միտթարեանց Թ. 265 ձեռագիրը, ուր պահուած է Վարդանի այս յարասութիւնս ալ: Հ. Բ. Սարգիսեանի Յուցակէն (Բ. էջ 849) չ'իմացուիր, թէ պահուած է հոն Յարասութեանս երկրորդ մասը, ուր նկատի առնուած պէտք է ըլլային 2—Թ Երանութիւնները:

4. Բարձրբերդցին կ'երեւայ հետեւեալ Վարդան գրիչը, որ 1275ին օրինակած է Գրիգոր Աստուածարանի ճառերը. գրեցաւ «ձեռամբ Վարդանայ անպիտան քահանայի եւ յետին գրչի»: Կը խնդրէ յիշել «գարդիւնական բարունին Վահր(ամ), որ զառաջոյ գրեալսն ի սմա շնորհեաց մեզ եւ մեք կատարեցաք» (Նոր Ձուղա, Թ. 102):

5. Երուսաղէմի Թ. 1709 (Դիոնիսիոս Արիսպագացոյ գրութիւնք) գրուած է 1298, եւ ունի յիշատակարանս. «Վերնահանգէս լոյսն իմաստութեանս առատակաղմն յաւրինէ ի լուսաւորեալս պէսպէս որակս. եւս առաւել ի հանդիսարկուք յաւիտենականս բնախառակել. զի որք հոգւոյն են ըստ Պաւղոսի՝ շարալծեալ ունին զամենայն. իսկ որք աշխատասէրք գոլով ի վերին աւզնակախութեանն շարժեալ պարզ գոլով տեսողակին (ա՛յսպէս) գերամբարձ գաւրութեամբն. քանզի ներգործականքն առաքիլութեամբն շարժին զիսկական լոյսն առ յընդունունն լուսալիւր մտաց, ի պատիւ եւ ի փառս Երրորդութեանն. յաւէտ եւս շարժեալ զիս տկարութիւնս ի սէր աստուածային մարգարանիս մեծին Դիոնիսիոսի: Եւ թէ ոք վերածայնէ թէ զիարդ կամ որպէս զմեծին Ստեփանոսի զՄեկնիչն չէ աստ շարագրել. զի ոչ թէ խոտան գոլով, այլ կարի յոյժ զեղեցիկ իմաստաբար. եւ այսպէս ուսցիս զպատճառն. մին վասն տկարութեան մարմնոյ ոչ շարագրեալ, եւ միւսն վասն ազգատութեանս. իսկ միւսն վասն

ժամանակին անկարողեան: Աղաչեմ, ով ոք տիրեցէ յետ մեր սիրով ընկալիք. զի բազում են մեկնիչք. եւ ով եւ կամի՝ առցէ. զի առաւել սիրէի զսրբոյս վարդապետութիւնս. այսմ այսպէս զրեցաւ:

Աղաչեմ յիշել զմեզ ի բարին Քրիստոս՝ զՎարդան սպասաւոր բանի հանդերձ ծնաւորաբն մեր եւ եղբարբք. ընդ նմին եւ զուսուցիչն իմ զտէր Յովհաննէս զարքա-եղբայր Հայոց Հեթմոյ, զրեացի ի զպրու-թիւն կենաց. եւ որ մեղ հայցէ եւ ինքն գացէ ի Քրիստոսէ: Էր թիւն Հայոց ՉԽԷ (1298). ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ բարե-պաշտի եւ աստուածասիրի, այր ողոր-մածի եւ բարեփայտուչ թագաւորի. եւ ի հայրապետութեան Հայոց տեառն Գրի-գորիսի երկրորդ վկայասիրի եւ զերակա-տար իմաստասիրի, այր առաքինւոյ, ուղիւ եւ ճշմարիտ դաւանողի զԵրրորդութիւնն եւ ինքն Քրիստոս աւրհնեալ յաւիտեանս:

Կից ունի Դաւթի էակաց զիրքը յիշա-տակարանովս. «Կատարեցաւ էակաց զիր եւ Դիոնէսիոսի ի մի կազմ ձեռամբ Վար-դանայ Կիլիկեցոյ. յիշել յաղաւթս ա-գաչեմ»:

6. Նոյն Գրիգոր Անաւարդեցի կաթողի-կոսի համար գրուած է էջմիածնի Թ. 500 (Ն. Ծնորհաւոյ թղթակցութիւնք): Գրու-թեան տարին կը պակսի. բայց 1305էն տա-րիներ յառաջ գրուած ըլլալու է, վասն զի այս թուականին կաթողիկոսը զայն նուէր ուղարկած է Գրաձոր Եսայի Նչեցւոյ հա-մար: Յիշատակարաններն են. թղ. 209ա. բուն զրչէն. «Ձերջանիկ կաթողիկոսն զտէր Գրիգոր ստացող զր(ոյս) յիշեցէք ազժիւք ի Քրիստոս. այլ եւ զՎարդան զր(իչս)»: Թղ. 230բ. «Չարժանապատիւ հայրապետն Հայոց զտէր Գրիգորիոս ստացող զրոցս ա-գաչեմ յիշել ի Տէր ծնողաք, քերէքք եւ եղբարբք եւ բնաւին զարմաք, որպէս զի սղորմեացի նոցա Քրիստոս: Ընդ նոսին եւ մեղաւոր զրիչս Վարդանս եւ իմոց ծնողացն եւ որոց ամէն ասեն»: Թղ. 369բ կը գրէ կաթողիկոսը ինքնագիր. «Տէր Գրիգորիս ծառայ Աստուծոյ եւ ողորմութեամբ նորին կաթողիկ(ոս) ամենայն Հայոց. բնծայեցի զգիրքս Եսայի վարդապետին (Չ. վրին) ի ձեռն մեր հաւատարիմ յեկատին տէր Կոս-տանդեայ արքեպիսկոպոսին Կեսարու, ա-ռաքեալ յԱրեւելս ի թվին ՉԾԴ»: Թղ. 435ա. «Եսայի վարդապետին է գիրքս. յազազս որոյ

միշտ յիշել աղաչեմ յողորմութիւնն Աստու-ծոյ⁴»:

7. Վարդան 1299ին Կոստանդին Կեսա-րիոյ արքեպիսկոպոսի համար կ'օրինակէ Երուսաղէմի Թ. 305 (Գեորգ Սիլվաւազւոյ Եսայեայ իմբաղիր մեկնութիւնը): Կը խնդրէ. «Չստացող սուրբ եւ աստուածային Երզարանիս զտէր Կոստանդին արչիւպիս-կոպոս աղաչեմ յիշել ի Տէր. նաեւ զանսրի-տան ծառայս տեառն զՎարդան զր(իչս) յի-շեսչիք ի Տէր»: Չեռագիրս յետոյ նուիրած է Կոստանդին արքեպիսկոպոս Եսայի Նչեցւոյ: Իր ինքնագիրը լուսատիւ չբառարկած է Ա. Ալլոյաձեան Պատմութիւն հայ Կեսա-րիոյ. Ա. էջ 914. հմմտ. նաեւ Ա. 913 եւ Բ. 1845—1846: Չեմ կանկածիր թէ Վարդանս Բարձրբերդցի-Կիլիկեցին չըլլայ:

Մինչ Կիլիկիա կը կորսնցնենք Վար-դանի հետքը 1299էն ետքը, ի Գրաձոր կը յայտնուի 1301ին Վարդան Կիլիկեցի նոր գրիչ մը: Չեմ տեսներ որ եւ է զժուարութիւն հաստատելու համար թէ Վարդան Բարձր-բերդցի-Կիլիկեցի 1300ին փոխադրուած ըլ-լայ Գրաձոր, շարունակելու համար իր ուս-մունքը Եսայի Նչեցւոյ համարարանին մէջ. ուր կը յաճախէին նաեւ ուրիշ Կիլիկեցիներ: Իր զբաղումներէն մէկն եղած է հոս ձեռա-գիրներ օրինակել. ունինք իրմէ.

8. Էջմիածին, Նոր ժողովածու, Թ. 1844 (Ն. Լամբրոնացւոյ Մեկնութիւնն Սաղմոսաց) գրուած է Եսայի Նչեցւոյ համար. Ա. մասը՝ թղ. 1—329ա օրինակած է Յովհ. Երզնկացի. շարունակութիւնն մինչեւ թղ. 441 գրած է Վարդան Կիլիկեցի ի Գրաձոր. մնացածը լրացուցած է Մկրտիչ զրիչ Թեղե-նեաց վանքը 1302ին. յիշատակարանին մէջ այսպէս կ'արտայայտուի Մկրտիչ զրիչ. «բայց առաջին սկիզբն գրութեան սորա եղեւ ի գաւառին Վայոյ ձոր կոչեցեալ, ի սուրբ եւ ի զերահոյսակ ուխտն Գրաձոր... ձեռամբ ուրուսն սրբազան քահանայի... Յովհաննէս անուն, որ էր ի հոշակաւոր քաղաքէն Եղբն-կայ կոչեցեալ. արդ զկէս Մեկնչի Սաղմոսիս զրեայ սոյն այր. եւ ապա սակաւ ինչ այլ ոմն Վարդան անուն ի նահանգէն Կիլիկիոյ. զո-րոց զվարձս հասուցէ Տէր» (Յովսէփեան, Խաղարակեանք, Գ. 161): Վարդան օրինա-

⁴ Հմմտ. Արարատ 1893, էջ 237—238ա. եւ Գ. արքեպ. Յովսէփեան, Քարտեզ հայ հնագրութեան, էջ 46 եւ ՏԻ. 22, 116: ուր լուսատիւ տուած է Գրիգոր կաթողիկոսի ինքնագիրը:

կած է թղ. 329ա—441. ինչպէս ինքնին ու-չաղիր ըրած է թղ. 329ա. «Աստից ի վեր Վարդանս Կիլիկեցոյս է գիր»: Թղ. 408ա. յիշատակարան է. «Չամպս գերագոյն հրա-չիւք լուսատու ցաւ զվարժապետս իմ Եսայի, ստացաւ զաստուածային իմաստիս, ո՛վ ընթերցաւք, յիշեցէք ի յաղաւթս ձեր եւ զՎարդան նուստ գրիչ. եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն»: Կը տեսնուի ասկէ, թէ Կիլի-կեցի Վարդան մօտաւորապէս 1300էն ի վեր կը գեղեցիկ Գրաձորի վանքը:

9. Երուսաղէմի Թ. 1309 (Գրութիւնք Դաւիթ Անյաղթի) ունի յիշատակարանս. «Փառք... Արդ եղեւ աւարտունն իմաս-տասիրական եւ յոքնիմաստ զրոցս որ է Պերիարմենիաս, ձեռամբ մեղապարտ եւ անհմուտ զրչի՝ Խաղարի սարկաւազի, որ երկանուամբ Գրիգոր կոչի, ի կատարմանս ԶԿԱ թուիս, յոր եւ սկիզբն լինի միւս չըջա-դայութեանն ՉԿԲ (1313 յունուար 1) հրա-մանաւ իմաստախոհ վարդապետին Վար-դանայ. եւ եղեւ աւարտ զրոցս ի զեկտեմ-բերի Ա. որ է չորս աւուրքը յառաջ վար-դապետն Վարդան էաս հրաման իշխանա-կան եւ զգաւազան վարդապետական»: Գժբախտարար զրչութեան տեղը չէ նշա-նակուած: Հայոց ՉԿԱ. տարին կ'աւարտէր 1313 յունուար 1ին եւ նոր տարին կը սկսէր յունուար 2ին: Ո՛վ է այս Վարդան Վար-դապետ, որ 1312, զեկտ. 28ին ստացած է վարդապետական իշխանութիւնն եւ գա-ւազանը:

Կրնանք ենթադրել, թէ Վարդան Կիլի-կեցին ըլլայ այս նորնմայ վարդապետը, ուստի այսքան երկար գեղեցած ի Գրաձոր: Ինձ կը թուի թէ այս չըջանին եւ այս միշա-վայրին մէջ գրուած է նաեւ Վենետիկի Միխիթարեանց Փիլոնի գրուածներու հաւա-քածոյքը, որ զրչութեան ոչ տեղին ունի եւ ոչ թուականը. բայց օրինակուած է «Յով-հաննէս բարունոյ» համար, որ «մտկանուն Երզնկացեցի կոչի». զրիչն է «անարժան զժող պիտականուն, քահանայ Վարդան սպասաւոր բանի⁵»: Ուրիշ ձեռագիր մը կը գրուի ի Գրաձոր «առ ոտն կայծակնա-մաքուր բարունոյ մերոյ էստեայ, որ է պայծառացեալ զործնականան եւ տեսա-կանաւ». զրիչն է Ներսէս, Էրբորդցի Կե-րիոն վարդապետին. իսկ վերջինս՝ կազ-

⁵ Փիլոնի Երբրդեցւոյ Մնացորդք ի Հայս. Վենետիկ 1826, էջ 622:

մողը: Ստացողը կը գրէ. «Արդ եւ Վարդան բանի սպասաւոր ստացայ զգիրքս զայս ի վայելունն մանկանց Սիոնի եւ յիշատակ ինձ եւ արեան մերձաւորաց իմոց՝ հաւրն իմոյ՝ Պարսամի եւ մաւրն իմոյ Տերանցի եւ եղ-բարցն իմոց Յովաննէս... եւ Ստեփանոսի եւ բուերցն իմոց Խաթունի, Մամախա-թունի եւ ԾնողՔորի» (Գեղամ Տէր-Կարա-պետեան, Չեռագիրք Տարօնի): Այս Վար-դան արեւելցի մը կը թուի:

Այս տեղ կը կորսնցնենք Վարդան Բարձրբերդցի-Կիլիկեցւոյ հետքը: ԺԳ. գարու վերջին եւ ԺԴ. գարու առաջին քա-տորդին բաղձաթիւ Վարդաններ ծաղկած են թէ ի Կիլիկիա եւ թէ ուրիշ հայկական վան-քերու մէջ: Չեմ գտներ որ եւ է կուսան անոնց մէջ նմանութեան զիմ վեր հանելու Բարձրբերդցւոյ հետ:

2. Միանգամ վեր հանելէ ետքը Վար-դան Բարձրբերդցւոյ անձնաւորութիւնն եւ անոր ժամանակը, զժուարին չէ այնու-հետեւ հերքել շ. Մ. Չամչեանի եւ անոր հետեւողներու այն թիւր կարծիքը, թէ Բարձրբերդցի Վարդան նոյն ըլլայ Վար-դան Պատմիչի հետ, զոր սովոր ենք առ հասարակ կոչել Արեւելցի:

Չամչեան խօսելով Արեւելցի Վարդան Մ'Էժ պատմիչի մասին կը գրէ. «Սա էր ծնողեամբ ի Բարձր բերդոյ յաշխարհէն Էր-կորդ Հայոց⁶». Կոստանդին Ա. Բարձր-բերդցի կաթողիկոս «յանձն արար զայն մեծին Վարդանայ վարդապետի Բարձր-բերդցւոյ իւրում քաղաքակցի⁷». «Վարդան Վ. Բարձրբերդցի կամեցաւ ձեռն արկանել յայն (ի Մեկնութիւն Սաղմոսաց) ի ինդոյ Յովհաննու Վ. ի առաջնորդին Հաղբա-տու⁸»: Վարդանի Սաղմոսաց մեկնութիւնը լոյս տեսաւ 1797ին Աժգարիան, ճակատին վրայ արձանագրուած «յօրինեալ... տեսան մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ»: Սումա-լեան Գեր. Սուքիասոյնայէս Չամչեանի հե-տեւելով կը գրէր⁹. «Vartano detto il Grande, che fiori nell'anno 1241, in Partzerpiert, città dell'Armenia minore, e mori nel 1271»: 1853ին լոյս տեսաւ շ. Ղ. Ալիշանի խնամ-քով Յովհաննու Սարկաւազայ, վարդապայ

⁶ Պատմութիւն Հայոց, Գ. 340:
⁷ Անդ, էջ 228:
⁸ շ. Մ. Չամչեան, Մեկնութիւն Սաղմոսաց. Վենետիկ 1823, Հատոր Ա., էջ 7:
⁹ Quadro della storia letteratura di Armenia Venezia 1829, p. 109.

Բարձրագույն, Յովհ. Երզնկացույ Երբրու-
ղեանք ի Ս. Գրիգոր Լուսավորիչ¹⁰»։ Այս-
պէս նաեւ Մ. Իմին Վարդանի Հաւաքունն
պատմութեանց խորագրած էր «Մեծին Վար-
դանայ Բարձրբերդցույ Պատմութիւն տիեզի-
րական¹¹»։

Այս թիւը ըմբռնումին անդրադարձաւ
Հ. Ղ. Ալիշան 1862ին¹²։ «Ոչ միայն յիշու եւ
ի գիրս, այլ ինձ թուի եւ հայրենեացն կո-
չունն սխալեալ, որոց Բարձրբերդցի գրա-
սանք քանզի ոչ ոք ի նախնեաց անտի կոչէ
զնա այսպէս, այլ մանաւանդ քանք նոցին ցու-
ցանեն յարեւելից Մեծաց Հայոց լինել զնա-
եւ ամս ինչ պանդխտութեամբ կեցեալ ի
Հոռոմկալայն եւ ոչ ի Բարձրբերդ. դայլ ոմն
Վարդան Բարձրբերդցի ցուցանելով ժամա-
նակակից նորին կրտսեր, որպէս յիշէ¹³ մա-
տենագիծ ոմն յամի 1286, որ էր իր վեշտա-
սան ամաւ յետոյ քան զմահ մեծին այսորիկ
Վարդանայ»։ Նոյն միտքը կը կրկնէ Հ. Ալի-
շան նաեւ «Սխուռանի» մէջ. «Չայնու ժամա-
նակաւ — այս ինքն ժԳ. դարու վերջերը —
հոչակաւոր զիտութեամբ Վարդան Բարձր-
բերդցի վարդապետ, զոր տեսաք յառաջա-
գոյն աշակերտ լինել Յովհաննու արքայեղ-
բոր. եւ յայտ է ամենեւիմբ զի սխալէին որք
զմեծ վարդապետն Վարդան՝ զհեղինակ
Պատմութեան եւ զմեկնիչ Հնգամատենին եւ
այլ բազում գրոց՝ ընդ սմա շիտթէին. զի
նա Արեւելցի է եւ † յամի 1271. իսկ սա է
Բարձրբերդցին, որ եւ յամի 1286 կոչէր
զինքն աշակերտ Արքայեղբորն. այլ թերեւ
ցարդ շիտթիցին երկասիրութիւնք ինչ երկո-
ցունց համանունն, եւ որպէս կարգ բա-
նին պահանջէ՝ նաեւ համաշնորհից. այլ արդ
զործ առանձին եւ ստոյգ ոչ ճանաչի երկրոր-
դիս. եւ ոչ յիշեալն ի Յակոբայ Նալեան.
«Գիրք մի ճարտասանութեան, աննման
ոճիւ, խրթնապէս շարագրեալ»։ որ եւ կոչէ
գրա Վարդան Բարձրբերդցի, այր իմաստուն
եւ բանիրուն»։ Թէպէտ այժմ լուսավորուած
է երկու անձնաւորութիւններուս զանազա-
նութիւնը, բայց զեռ կը յեղյեղուի ոմանց
բերանը «Վարդան Վ. Բարձրբերդցի Պատ-
միչ¹⁴»։

Ինձի կ'երեւայ, թէ Չամչեանը մոլորու-
թեան առաջնորդողն եղած է Յակոբ Նա-
լեան, իր տողերովս. «Բարձր բերդ, յորմէ
էր Վարդան Բարձրբերդցի այր իմաստուն եւ
բանիրուն»։ Հրապարակի վրայ չկար որ եւ
է գործ, որ արդարացնէր Բարձրբերդցույ
վերագրուած այդ յատկութիւնները. բայց
անոնք ճշդիւ կը համապատասխանէին Մե-
ծին Վարդանայ։

Հ. Ղ. Ալիշան այս կնիւրը լուծելու ժա-
մանակ նոր հանգոյց մը հրապարակ կը դնէ,
երբ նախորդ տողերու շարունակութեան մէջ
կը գրէ. «Իսկ զմիւսն գայն զլրսեր, այսինքն
Վարդան Բարձրբերդցին, Երկրորդ Վարդան
կոչէ Ղազար Չահկեցի կաթողիկոս, եւ նմա
ընծայէ զՀամառօտ մեկնութիւն չորից աւե-
տարանաց, զԱռական, զՀամառօտ աշխար-
հազրութիւնն, զՄեկնութիւն քերականի.
որոց յետինքը կարծին երրորդի ուրումն
կրտսերազունի Վարդանայ գործք¹⁵»։ Ասկէ
մոլորած է Հ. Տաշեան եւ Վարդան Բարձր-
բերդցույ վերագրած է «Լուծմունքն ի Ս.
Գրոց», որ Արեւելցույն է, եւ «թերեւս իրեն՝
Մեկնութիւն Քերականին¹⁶»։

Ղազար Չահկեցի¹⁷ կը զանազանէ Ա. եւ
Բ. Վարդան. «Վարդան Մեծն եւ առաջինն,
այր զիտնական եւ աստուածարան» կը ճանչ-
նայ. իսկ «Վարդան Երկրորդ, այր ճոխ-
իմաստ եւ շնորհազարդ» կը ներկայացնէ։
Վերջնոյս համար կը գրէ. «Սա արար Համա-
ռօտ Մեկնութիւն չորից աւետարանաց
զժուարիմաց բանիցն։ Եւ ժողովեաց զԳիրս
Առակաց ի պէտս հոգւոյ եւ մարմնոյ։ Արար
եւ զհամառօտ Աշխարհացոյցս։ Ասաց եւ
զարմանալի Ներբողեանս ի դէմս սրբոյ Լու-
սաւորչին պատմագրարար»։ Կը տեսնուի
ասկէ, թէ Չահկեցի չէ կրցած զանազանել
Արեւելցին, Այգեկցին եւ Աշխարհացոյցին
հեղինակները։ Յամենայն դէպս «Վարդան
Բարձրբերդցի» անձանօթ փնացած է իրեն
թէ՛ անուամբ եւ թէ՛ գրութիւններով։

3. Եւ ընդհանրապէս ոչ ոք, բացի Նա-
լեանէ, ի մերձուստ կամ ի հեռուստ ծանօթ
եղած է Վարդան Բարձրբերդցույ անունը
կրող որ եւ է գրութեան, ամէն անոնցմէ,
որոնք խօսք ըրած են իր մասին։ Այս պատ-

¹⁰ Սոփերք Հայկականք Ե., Վենետիկ 1853։
¹¹ Մտկուա 1861։
¹² Հաւաքունն Պատմութեան Վարդանայ վար-
դապետի. Վենետիկ 1862, Յառաջաբան, էջ Բ.։
¹³ Սխուռան, Վենետիկ 1885, էջ 149։
¹⁴ Համեմատէ Հայապատում Բ. ցանկ ա-
նուանց։

¹⁵ Հաւաքունն պատմութեան Վարդանայ,
էջ Բ.։
¹⁶ Հ. Յ. Տաշեան, Յուցակ, էջ 1155 4։
¹⁷ Գրախոս ցանկալի. էջմիածնի 1735, էջ
638—639։

ճառաւ ալ հարկ է ծանրակշռութիւն առլ
Յակոբ Նալեանի հաղորդած տողերուն,
որոնք հետեւեալն են. «Վարդան Բարձր-
բերդցի այր իմաստուն եւ բանիրուն. որ ունի
դպիրք մի ճարտասանութեան աննման ոճիւ
խրթնապէս շարագրեալ»¹⁸։ Առանց տարա-
կուսի նա ձեռքի տակ ունեցած էր այդ ճար-
տասանութիւնը, որուն ոճի մասին դատաս-
տան կը կտրէ. այդ գործը խորագրին մէջ
կրած ըլլալու էր նաեւ հեղինակին անունը
«Վարդան Բարձրբերդցի», որով միայն կա-
րող էր զանիկա հեղինակ ճանչնալ։ Անշուշտ
ցանկալի էր մեզի այժմ ոչ միայն գրքին ներ-
քին կազմութեան մասին լայնագոյն ծանօ-
թութիւններ ունենալ, այլ եւ անոր գրու-
թեան պարագաներու եւ ժամանակի նկատ-
մամբ տեղեկութիւններ ստանալ։ Այդ գործը
չէ հասած մեզի։

Բայց հասած են Վարդան Բարձրբերդց-
ույ հեղինակութիւններէն երկու չափական
գրութիւններ, մին բարձր ոճով եւ զբարբար
հայերէնով. երկրորդը՝ ուսմիտքն լեզուով։
Ասոնք են, պահուած էջմիածնի Թ. 725 ձե-
ռագիրը Հաւաքածոյին մէջ, զրուած ժԳ.
դարուն.

1. Վարդան վարդապետի Բարձրբ-
բերդցույ ոգեալ բան յաղագս զանազան եւ
հրաշալի աւուր Մկրտութեան։

Գերահօր խորհուրդ վրկագործու-
թեան,
Մեծահանճար արհեստ վերամբարձու-
թեան...

վ. Ի խաչ կալով ընուլ զկարիս հոգւոյ։
= էջմ. 725, թղ. 266բ—276բ։

2. Վարդան վարդապետի բան Բարձրբ-
բերդցույ կիլիկեցույ։ Ոոցուած շատ ունիմ
սրտիս. զո՞ր ասեմ կամ զո՞ր զանդարիմ...
= էջմ. Թ. 725, թղ. 82բ—83բ։

Բնագիրը տեղ տեղ աղաւաղուած է այս
երկրորդին մէջ. բայց եւ այնպէս պահած է
թարմ եւ գողտրիկ նկարագիրը. յորինուած
հայերեններու չափով՝ 2—5—3—5 հա-
տածներով։ Ստորեւ ամբողջութեամբ կը
հրատարակեմ այս քառերկները, զոր օրի-
նակած էի 1926ին էջմիածին։

¹⁸ Յակոբ պատրիարք Նալեան, Գիրք կոչեցեալ
Գանձարան Ծանուցմանց։ Կ. Պոլիս 1738, Հատար Գ.,
էջ 284—285։

Վարդան Բարձրբերդցի ժամանակակից
է Յրիկի, նաեւ Յովհաննէս Երզնկացույ եւ
Սաչատուր Կեչառուեցույ։

Առաջին երգը, որ Գանձի նկարագիրը
կ'երեւցնէ, կը յիշեցնէ ինձ երկու գանձ,
որոնք վերագրուած են «Վարդան վարդա-
պետի» եւ կը գտնուին ԺԳ. դարու առաջին
կէսին գրուած հին Գանձարաններու մէջ.
ասոնք են.

Գանձ Յարութեան Գրիստոսի Աստու-
ծոյ մերոյ եւ ամենայն Կիւրակէի. Վարդան
վարդապետի ասացեալ։

Վեհադոյն խորհուրդ տիրական, զոր
կարգեցեր գալտաեամբ քո յաշխարհս...։
Տուները կը կապեն «Վարդանայ»։

= Երեւան, 372, թղ. 270ա—272ա
(1379)։ Երուսաղէմ, 231, թղ. 86բ (ԺԳ.)։
338, 73ա (1387)։ Անկիւրա 107 (1391)։

Գարող Յարութեան Գրիստոսի Աստուծոյ
մերոյ. Նոր Կիւրակէի։
Ահաւոր մեծութիւն, անճառ էութիւն,
բարձրեալ անքնին,
Անանջատ միութեամբ զուգեալ սուրբ Եր-
րորդութիւն...

Տուները կը կապեն. «Ասացած Վար-
դան»։

= Երեւան 372, 251բ—256բ։ էջմ.
2061, 58ա (1310)։ Տիւրքինգէն 61, 49ա
(1290)։ Պարիս, 79, 96ա (ԺԳ.) 80, 188ա
(1380)։ Վենետիկ, 254, 12ա։ Երուսաղէմ
231, 91բ։ Նիկոսիա 48, 106ա։

Պարիսի Թ. 80 խորագրին մէջ կ'ընծայէ
«ասացեալ եռամեծի եւ սուրբ վարդապե-
տին Վարդանայ»։ միւսները պարզապէս
«Վարդան վարդապետի»։ Չեմ համար-
ձակիր այս Վարդանի մէջ «Բարձրբերդցին»
տեսնել։

Յովհաննէս Եպ. Շահխաթունեանց կը
գրէ¹⁹, թէ էջմիածնի Մատենադարանին մէջ
«դաւա... շարակնոց մի կարի հարուստ եւ
ճոխ, յորում ընդ այլ անձանօթ շարական
երկոց, գրեալ կայր եւ շարական մի ի վերայ
սուրբ Գեղարդայ՝ յորինեալ ի մեծէն Վար-
դանայ Բարձրբերդցույ»²⁰։ Այդ նորագիւտ

¹⁹ Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի եւ
հինգ գաւառացի Արարատայ, էջմիածնի 1842, հա-
տար Ա., էջ 48։
²⁰ Հ. Ալիշան, որ շարականս կ'արտագրէ Շահ-
խաթունեանէն, կ'արտայայտուի այսպէս. «Մեծին
վարդանայ վարդապետի մակագրի եւ շարական գո-
վասանական ի Գեղարդին», Այրարատ, 348, ծան. 1։

չարահանն էր Մանկունքն ի Ս. Գեղարդ, որ կը սկսէր. «Իսկ դու պարծանքդ պարծանաց, գեղարդդ սուրբ եւ գերազանց»: Ահնարհուած ձեռագիրն է էջմիածնի Թ. 1588 Շարահնոցը, որուն կից Սարգիս երէց կազմած է ցանկ մը թէ շարահանները ո՛ր հեղինակներէ յօրինուած են: Սարգիս երէց, ըստ Ամատունի վարդապետին²¹ ԺԳ. դարու հեղինակ է, այս ինքն նոյն դարու վերջերը ծաղկած: Վերոյիշեալ Մանկունքին համար կը գրէ Սարգիս երէց, թէ «սուրբ Վարդապետին Վարդանայ է սասցեալ. ուստի առանց «Բարձրբերդցւոյ» յաւելուածի: Կը համարիմ թէ Շահխաթունեանց հոս Չամչեանի ազդեցութեան տակ նոյնացուցած է Վարդանը համանուն Բարձրբերդցւոյ հետ, եւ իմացած է Արեւելցին:

Նոյն Սարգիս երէց իր ցուցակին մէջ «Վարդապետին Վարդանայ սասցեալ» նշանակած է նաեւ յաջորդ պարահանոն շարահաններս, զորոնք խնամով հաւաքած եւ հրատարակած է Սահակ Վարդապետ Ամատունի:

1. Մեծացուցէ. Հրաչազեղ ծաղիկ յուսոյ Մարիամ...: — Տիրուհի եւ մայր Աստուծոյ բանին...: — Ուրախական զարդ խորանի...: — Աննիւթական սրորէ...: — Արիւթախոյլ լուսածաղ արեւ...: — Ուրախացիր, Աստուածածին Մարիամ...: — Աստուածածին տաճար փառաց...: — Տունը՝ Հեթոմի Տիրուհի (էջ 15—17):
2. Օրհնութիւն. Հօր արքային զօրեղ զինուոր... (էջ 57):
3. Մեծացուցէք Աւագ շարաթու: Եղեմ բանաւոր...: — Երկինք յերկրի Մարիամ...: — Լոյս արարչական...: — Ով Մայր լուսոյ Աստուածածին...: — Ով տիրամայր արամութեամբ տիրեալ...: — Աստուածածին ի շնորհէն... (էջ 96—99):
4. Մեծացուցէք Համբարձման. Ուրախացիր Մարիամ...: — Հարսն երկնից... (էջ 104):
5. Ծարական Ս. Սանդխոյ. Անդրանիկ կամացն Հօր կամակատար... (էջ 116—117):
6. Վարդայ խաչին Օրհնութիւն. Թագաւոր մեր Քրիստոս... (131—132):

7. Սրբոց թարգմանցացն՝ ձաշու. Յնձացէք այսօր սղգք եւ աղինք... (էջ 139):

Թէ այս Վարդան վարդապետ նոյն չէ Արեւելցւոյ կամ աւելի հնազոյն Հաղբատացի Վարդաններու հետ, բացայայտ կը տեսնուի «Հօր արքային զօրեղ զինակիր» Ս. Սարգսի նուիրուած շարահանէն, ինչպէս զայս նկատի առած է արդէն Ամատունի (57—58), ուր երգած է հեղինակը ի մէջ այլոց տողերս.

Յերեւելալս ի Պարս խորին Խորասան...
Եւ մօտ ի քաղաքն որ կոչի Տամղան,
Ի դաշտ ծաղկածին զոր յիշէ Վարդան,
Ի յամուռն անառ Քրդաքաւ անուան,
Անդ ուր զՄարտիրոս արկին ի կապան:

Վարդանայ յիշած տեղիքն է Վարդան Արեւելցւոյ Պատմութեան հետեւեալ պարբերութիւնը. «լուեալ Նլտուզն... դառնայ ի դաշտն Գագայ. եւ սասց այրել զԽաչն հոչակաւոր»: «Իսկ Մոյսար Նոյին... (էսո) զԳագ անուանի բերդ... ուր կայ հոչակաւոր եւ սուրբ ուխտն Խաչ եւ եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի զօրավարին, օրհնեալ ի սրբոյն Մեսրոպոյ վարդապետէն եւ թարգմանչէն Հայոց, որ կայ ի գլուխ Գագայ, եւ հայի ի դաշտն լայնանիստ եւ երկայնատարած» (էջ 127, 144—145. հմմտ. նաեւ 123): Եթէ շարահանին հեղինակ Վարդան վարդապետ կարգացած է 1268ին աւարտած Հաւաքումն պատմութեան Վարդանայ Արեւելցւոյ, բնականաբար նա ապրած պիտի ըլլայ այս թուականէն վերջը: Այս պարագային այս Վարդան կարող է նոյնանալ Բարձրբերդցւոյ հետ, որ կը ծաղկէր 1280—1320ին մօտաւորապէս: Տեսանք վերագոյն, թէ Վարդան Բարձրբերդցի զԳրեղոր Անաւարդեցի երկրորդ վիպասէր կը կոչէր. եւ Ամատունի Աւագ շարաթու վերոյիշեալ Մեծացուցէներու մէջ նմանութիւն կը գտնէր Անաւարդեցւոյ ոճին հետ. որ զարմանալի չէ: Եւ եթէ այս շարահաններու յօրինման ժամանակը ԺԳ. դարու վերջին քառորդին կ'իջնայ, վասն զի Սարգիս երէց այս շրջանին ծաղկած է ըստ Ամատունու (էջ Գ.), կրնանք յանձնի «Հեթում տիրացուի» Հեթում Բ. թաղաւորը նկատել, որ այն ժամանակ զեռ թագածառանդ ըլլալու էր: Ծարականներու հեղինակ Վարդանը Ամատունի միշտ «Բարձրբերդցի» անուանած է. կը թուի ինձ թէ ճիշդ է անոր այս անուանումը, այն

²¹ Սահակ Վ. Ամատունի, Հին եւ Նոր Պարական կամ անվաներ շարահաններ, Վարդապետ 1911, էջ 130:

իմաստով որ յամենայն դէպս Արեւելցին չէ, այլ 1270—1300 ծաղկող ուրիշ Վարդան մը: Գարեգին արքեպ. (այժմ Վեհափառ Կաթողիկոս) Յովսէփեան անդրադառնալով այս կէտին գրած է. «ԺԳ. դարում արեւելեան Հայաստանում ծաղկել է սկսում հոգեւոր երգերի, տաղերի եւ դանձերի գրականութիւնը, Վարդան (ոչ Բարձրբերդցի, ինչպէս կարծում է Ամատունին), Մխիթար Այրիվանեցի, Խաչատուր Կեչառեցի, Մկրտիչ, Յովհաննէս Երզնկացի, Կիրակոս Երզնկացի եւն, ձգում են այդ գանձանակի մէջ իրենց լուսաները²²»: Որքան ինձ ծանօթ է նոր կամ պարահանոն շարահանները ԺԳ. դարու վերջին քառորդին եւ ԺԳ. դարու առաջին տասնեակին շարագրուած են Հոռոմկլայ, Կիլիկիա եւ Երզնկա: Հոռոմկլայ ապրած է իր կեանքին վերջին մասը Յովհ. Գառնեցի, Երզնկա՝ Յովհ. եւ Կիրակոս, Կիլիկիա՝ Բարսեղ արքայեղբայր, Գրեղոր Անաւարդեցի, Յակոբ Մեծքարեցի եւն. ԺԳ. դարու վերջին քառորդին արեւելեան Հայաստան երգեցող Վարդան ծանօթ չէ. իսկ Վարդան Բարձրբերդցի, ճիշդ այդ շրջանին ծաղկած է թէ իբրեւ զԵրէ, թէ իբրեւ տաղասաց եւ թէ հոգեւոր երգ զրոյ. չկայ պատճառ իրեն չվերագրելու նաեւ Վարդանայ անունով այդ շրջանին յօրինուած շարահանները. դոնէ աստ եւ այժմ:

ՎԱՐԳԱՆ ՎԱՐԳԱՊԵՏԻ ԲԱՐՁՐԲԵՐԴՅԻՈՅ
ԿԻԼԻԿԻՅԻՈՅ ԲԱՆ

Խոցուած շատ ունիմ սըրտիս,
զոր ասեմ կամ զո՞ր գանդըտիմ.
Ի մանկութենէ, եղբարք,
հետ ուսման բանից կու դատիմ.
Ի սիրոյ տաղնապ կրեալ՝
ծարաւի հողով տոչորիմ.
Միշտ ակն ունեւով հասման՝
յիմաստից զուրն դեզերիմ:

- 5 Գերիս յանձնուա անձանց՝
անաչառ հարուածս ընդունիմ.
Որ իմ խոցուա չեն գիտակ՝
դինչ պիտի նա զայն կու խօսին:

ՉԵՈՒԳՐԻՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐԸ
ԵՈՐԱԳԻՐՆ՝ Վ. Վարդապետի բան բարձրբերդցեցի Կիլիկիցոյ:
1 գանդտիմ: — 2 եղբայրք: — 3 կրել...
հողով: — 4 դեզերիմ: — 5 այլ իմ:

²² Խաղբակեանք կամ Պոռչեանք Հայոց պատմութեան մէջ, Երուսաղէմ, 1944, էջ 99:

Եղբարք խոցեցայ հողով
եւ չհասայ դինչ հասարթ ունիմ.
Բանդի հեռացեալ յաստեաց՝
տեսութեանցս այլ իմն երեւիմ:

Արդ երանելի ասի,
որ երեք շնորհք յինքն ունի.
Մին որ գիտութիւն խելացն
ընդ բարին ընտրել հընարի.
Մին որ քաջութեամբ կամաց
սուրբ պահէ զինքն՝ լ առաքելի.
Մին որ ցանկութիւն սըրտին
երկնային փառացն փափաքի:

Զինչ որ հարաւոյ հողմըն
լ հիւսուսոյն ընդ յերար բախի.
Յերկուց տարբեղէն օղբն
յըզանայ՝ լ անձրեւ ծընանի:
Հանց երբ Աստուծոյ սէրբն,
որ ի յերկեղ սըրտին խառնի.
Նա ցող իմաստից բըխէ
ի մըտաց եւ հանձար բարի:

Յորժամ որ վարնան նրման
չորս տարերքն առ մարդն հաչտի,
եւ յորտամանէ հողմոց
դինչ երկիր ի դորձ զարթըշի:
Նա իւր անդատան հողոյն
գիտութեամբն պըտաղբերի.
Երբ զամէն բարեաց համբաւ
լ աւետեաց որ ի նմա հընչի:

Զինչ հողն ի ծաղկանց ծընունդ
գանազան գունօք զարդարի.
Յորժամ յեղանակ տարւոյն
չորս ի մի ժամ հասարակի:
Հանց բանն անհաշիւ բըխէ
ի մըտացն հողեղինի,
Երբ արիւթիւնն ու սէրն
ու խոհունն միաբան առ իրար լինի:

Սուրաթ բէսիֆաթ ասի
դինչ անշունչ տիպար կենդանայն.
Որ խօսք պայմանաւ ասէ
լ անթարթիպ ի դէմը մարդոյն.
Որ շքել ու շիւա ցուցնէ
ու խաբէ ըզտեսն աչերոյն.
Ա՛յ դէմին դամագ, ասեմ
տալ խօսից վըկայ ի դործոյն:

7 խոցեց հողով... չհասա: — 8 յաստեց: —
9 արդ երանելի ասի իմացիր՝ այնքմ երանի ասեմ...:
երբորդ, նախնարար անշունչ գ պատուով: — 10 քէ
եսու եւ քէ 11—12 ս պատուով փոխ. մէկի: —
11 ու փոխ. լ: — 13 եւ քիբես լաւագոյն լ: —
14 յգանս ո՞ւ: — 17 դ (պատուով) տարերքն առ մդ
(պատուով) հչտի (պատուով): — 19 հողոյն: —
20 գամեն... ո՞ւ: — 22 տարոյն: — 24 միաբանի: —
25 անշունչս ի փար կենդանայն: — 26 ու փոխ. լ...
ի դէմ: — 27 բտեսն: — 28 այ դէ մի՞ն. դամալ. կար-
դացի ա՛յ դէմին դամ(մ)ագ, ո՞հ տաւապեալ բան-
ասքիւ:

Մեծ է կըշքով խօսիլըն
 մէկին ի մէջ բազմաց,
 30 Որ խելօքն լոյս ծագեալ
 փարատէ զխաւար ի մըտաց,
 Եւ իմաստութեան խելքն
 ցոյցանէ բանիւ լըսողաց.
 Ապա ով ըզսէրն ունի,
 որ լրումն է պատուիրանաց:

Ով ոք որ ի զուր հոգոց
 լ յանցաւոր իրաց կայ ի բաց,
 2ինչ ոսկի խալաս է նա
 որ զատի ի չորս տարերաց.
 35 Եւ այլ թէ հոգևով լըսէ
 ու խօսք իր մի ի խելաց,
 Ի վեր քան զերկիր է նա
 եւ նրման է լուսեղինաց:

Ով ոք մ'որ սիրոյն ըզբոցն
 ի սրտին ի վառման ունի,
 Հառչէ նա ու ջուր ուզէ,
 յայն ի պահն յինչ ակնէ լինի:
 Այս բանս ի յամէն մարդէ,
 40 Հի ընդ հոգեւոր սիրոյն
 շատ մարմնոյ սէր կու խառնի:

Ես շատ եմ յարմացք մնացել,
 Թէ խելօքն ինչ ցեղ կու խաբի.
 Իրք մի որ ջօհար ասի
 եւ ազատ յայլ իրք չխառնի,
 Ամ հանց զիտացէք ըզնա,
 որ ամէն մարդոյ չհամնի.
 Բայց թէ որ յըստակ մըտօք
 ի Քրիստոս ուղիղ դաւանի:

34 ով որ չունի ոք... հոգոց... կա: — 36 խէ ու խօսի էլաց: — 38 ով ոք մոր: — 39 հառչէ... յան ի պահն: — 40 ամեն. չունի կու: — 44 զիտաք:

ՕՏԱՐ ԲԱՌԵՐ

- Անթարթիպ. ա. քէրքիպ, կարգ, ուստի «անկարգ»:
- Բէսիֆաթ. պ. ա. բէ + սիֆաթ, ան-որակելի, ան-նկարագիր:
- Խալաս. ա. խասս, խալիս, զուտ, անխառն:
- Հարաթ. ա. անձուկ, կարօտութիւն:
- Ղամագ. ա. զամագ, բուռ, բանասրիւ, մատնիչ:
- Ղէմին. պ. զամին, զաման. թախծեալ, տառապեալ:
- Շէլ. ա. ձեւ, կերպարանք:
- Շիւա. պ. ճարտարախօսութիւն:
- Ջօհար. պ. գոհար:
- Սուրաթ. ա. երես:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



Գ Ի Բ Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ը Ն
 ԵՌԹԻՒ ԴԱՆՈՒԹԵՅԻ Ս. ԼՈՒՍԱՆՈՐԻԶ
 Ե ԿԵՂԵՑԻՈՑ ՉԻՆՈՒԹԵԱՆ
 (1389)

Այս Օրհնութեան գիրը երեւան հանցի
 Նիկոսիայի Հայոց Եկեղեցւոյ Առաջնորդա-
 րանին մէջ պահուած Թ. 55 Ժողովածոյ ձե-
 ուղորին մէջ, թղ. 198ա—200ա, իրր ԺԴ.
 դարէ: Գրուածքս ձեռագրին մէջ խորագիր
 չունէր:

Տրուած է Օրհնութեան գիրս 1389ին,
 Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյն չի-
 նութեանէն ետքը, յայտնելու համար շնոր-
 հակալութիւն մասնաւորապէս այն ամէն մեծ
 եւ փոքր վաճառականներու եւ ընդհանրա-
 պէս Ժողովուրդին, որոնք նպաստամտոյց
 եղած են նուէրներով Եկեղեցւոյ շինութեան:
 Դժբախտաբար գիրս գրողին ստորագրու-
 թիւնը չէ պահած, Եկեղեցւոյ այն առաջնոր-
 դին, որ հանած է շրջաբերականս:

Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ շինութեան
 շուրջը կային հրապարակի վրայ անազանա-
 գոյն ժամանակներէ այլ եւ այլ իրար հակա-
 սող յիշատակագրութիւններ: Պիտի ներ-
 կայացնեմ զանոնք հոս, անոնց արժէքը
 միանգամ ընդ միշտ գնահատելու համար:

1. Բարգէն վ. Կիւլէսէրեան¹ հրատա-
 րակեց Արմաշի ձեռագրէ մը Եկեղեցւոյս չի-
 նութեան հայոց յիշատակարանս, գրուած
 կամ օրինակուած 1769ին:

«Ի թուին Փրկչին 1391, ի հայրապե-
 տութեան Տեառն Թէոդորոսի, ոմն վաճա-
 ուկան Կողմ(ա)ս անուն Կաֆայէ եկեալ ի
 Կոստանդնուպօլիս, որ էր ընդ իշխանու-
 թեամբ Յունաց, հրաման տուեալ շինելոյ
 զԵկեղեցի մի ի Ղալաթիա, կոչելով զանունն
 Սուրբ Լուսաւորիչ: Եւ զմատուռ Ս. Խաչին
 Աւետ ոմն զարբին շինեաց»: Այս տողերը
 կը գտնուին նաեւ Անտոնեան Հարց Մատե-
 նագարանի Թ. 229 ձեռագրին մէջ (այժմ ի
 Չմմատ): Ընթերցուածի տարբերութիւնք
 են. «Թիոդորոսի». «Կոմս» (փոխ. Կող-
 մասի). աւեր (փոխ. Աւետ):

2. Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյն ճակա-
 արին քանդակուած է Արձանագրութիւնս²:

¹ Կոլոտ Յովհաննէս պատրիարք. Վիեննա 1904, էջ 110:
² Կիւլէսէրեան, անդ, 124—125. Դկտ. վ. Թորգոմեան, Երեմիա Չէլչիպի, Բ. էջ 480:

Տաճար Աստուծոյ: Ի սկզբան կառուցա-
 սուրբ տաճարս յանուն սրբոյն Գրիգորի Լու-
 սաւորիչի մերոյ ի հայրապետութեան Հայոց
 Տ. Թէոդորոսի սրբազան կաթողիկոսի եւ
 ի պատրիարքութեան սրբոյ Երոշտղէմի
 Տ. Եսայեայ արքեպիսկոպոսի առաջնոյ,
 զնեալ տեղիս սրբոյ տաճարիս ի ձեռնովաց-
 ւոց Կոմս անուն բարեպաշտ վաճառականի
 ուրուսն Քէֆի քաղաքին Ղըրիմու, յամի
 Տեառն 1436:

3. Երեմիա Չէլչիպի Քէօմիւրճեան
 († 1695) կը գրէ իր Ստամպուլոյ պատմու-
 թեան մէջ³, 2. տող 195—198.

Չէլչիպի Լուսաւորիչ ուխտիցուք զՀայոց
 սիրտարանս:

Չսա շինեն Կաֆայեցի պաղիճկանքն յա-
 նուն⁴ նախնականս:

Որոց մասն ի լեհ անկեալ ՚ւ ի Ստամպուլ
 տեղացիք կոչման:

Թիւն ութն հարիւր ութսուն հինգ, ընդ
 Յունաց տիրապետութեան:

4. Հ. Ղ. Ինճիճեան⁵, յայտնի չէ ինչ
 աղբիւրէ, կը հաղորդէ:

Ի Ղալաթիա «մի Եկեղեցի է Հայոց, զոր
 նախ առաջին շինեաց Կոմս անուն վաճառա-
 կան ոմն. որոյ եկեալ ի Քէֆէ քաղաքէն
 Գըրըմու ի Ստամպուլ ի 1391, ի կաթողիկո-
 սութեան տեառն Թէոդորոսի, էառ տեղի ի
 ձէնովացւոց ի Ղալաղա քաղաքի, եւ անդ ի
 թուականիս (1436) կառոյց զայս Եկեղեցի
 յանուն սրբոյ Լուսաւորիչի: Իսկ զարբին ոմն
 Աւետ անուն կառոյց զսեղան սրբոյ Խաչին որ
 առ նովաւ»:

5. Սարգիս դպիր Սարաֆ Յովհան-
 նէսեան այսպէս կ'ամփոփէ իր ձեռք բերած
 տեղեկութիւնները⁶:

«Եւ առ նմին է Եկեղեցին Հայոց յանուն
 սրբոյն Գրիգորի Լուսաւորիչին. զոր ստու-
 ցեալ է աղգ մեր ի թուականին Հայոց ՊՁԵ
 եւ յամի Տեառն 1436: Եւ շինեալ է զսա Կոմս
 անուն իշխան ոմն եկեալ ի Կաֆա քաղաքէ
 ցամաքակղզւոյն Գըրըմու, յորժամ էր քա-
 յալուստը»:

³ Հրտ. Դկտ. վ. Թորգոմեան, Վիեննա 1913, էջ 74: Հմմտ. նոյն, հատոր Բ. անդ, 1932, էջ 475—477:
⁴ Թորգոմեան, Բ. 476 կ'ուղղէ «յանուն»ը «յԱւուց», ինչպէս ունին Երուսաղէմի եւ Էջմիածնի օրինակները:
⁵ Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի, Հատոր Ե. Վենետիկ 1802, էջ 183:
⁶ Դկտ. վ. Թորգոմեան, Ստամպուլոյ Պատմու-
 թիւն, Բ. էջ 479:

զաքն Ղալաղա ընդ իշխանութեամբ ձէնու-
 վացւոց: Չորոյ զմատուռն, որ յանուն
 Ս. Խաչին, շինեալ է զարբին ոմն Աւետ:
 Եւ այս պատահեաց յայն ժամանակի մինչդեռ
 Կ. Պոլիս էր ի ձեռն Յունաց ԺԼ ամօք յա-
 ռաջ քան զառուսն նորին ի Տաճկաց»:

Կարեւոր յիշատակարան մ'է Արմաշի
 ձեռագրին աւանդածը, անկախ միւսներէն:
 Յիշատակագիրը քաղած ըլլալու է իր ծա-
 նօթութիւնները Եկեղեցւոյն ճակատը զրտ-
 նուած արձանագրութեան մը, եւ այս 1436էն
 յառաջ: Այն տեղ կարդացած ըլլալու է
 Կողմս (Կոմս) անունը եւ «ի թուին Փրկչին
 1391», ինչպէս նաեւ զարբին Աւետի յիշա-
 տակութիւնը: Արձանագրութեան մէջ պէտք
 է եղած ըլլայ նաեւ Հայ տօմարին թուա-
 կանը, զոր զանց առած է յիշատակել: Իր
 ձեռք բերած տեղեկութիւնները հարազատ
 աղբիւրէ են:

Արձանագրութիւնը շարագրողը ունե-
 ցած է աչքի տառալ հնագոյն արձանագրու-
 թիւնը, արդէն դժուարութեան չի «Կողմարը»
 որ արձանագրութեան մէջ հաւանօրէն փա-
 կազիր էր, ճշդիւ կարդացած է «Կոմս»:
 Թուականը կամ անընթեան իր եղած է եւ կամ
 զիտմամբ զուրս ձգուած: Կը սպասուէր,
 որ «եւ ի պատրիարքութեան...» բառերէն
 յառաջ արձանագրուած ըլլար «եւ այժմ նո-
 րոզեցաւ». այսպէս միայն կրնար արդարա-
 նալ Եսայի արքեպիսկոպոսի յիշատակու-
 թիւնը 1436ին տեղի ունեցած նորոգութեան
 արձանագրութեան մէջ: Ճշդիւ Եսայի Ա.
 1436 Կ. Պոլիս կը գտնուէր⁷:

Երեմիա Չէլչիպի ծանօթ է 1436ի արձա-
 նագրութեան: Իսկ Ինճիճեան կ'երեւայ թէ
 ունէր ձեռքին թէ՛ Արմաշի ձեռագրին վե-
 րոյիշեալ հատուածն եւ թէ՛ 1436ի Արձանա-
 գրութեան պատճենը. փորձած է այս եր-
 կուքէն խառնուրդ մը կազմել: Սարաֆ Յով-
 հաննէսեան հիմնուած է Արձանագրութեան
 վրայ. իր ծանօթութիւնը Աւետ զարբինի
 շինած մատուռի մասին քաղած է վերոյի-
 շեալ յիշատակարանէն:

Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ շինութեան
 ճիշդ թուականը պահած է մեղի Օրհնու-

⁷ Եսայի Ա. պատրիարք աթոռակիցն էր Սար-
 տիրոս պատրիարքին: Իրմէ յառաջ ուրիշ Եսայի
 պատրիարք չէ եղած Երուսաղէմ, զոնէ յանուանէ
 չէ յիշուած պատմութեան մէջ: Հմմտ. Հ. Ա. Պալ-
 ճեան, Պատմութիւն կաթ. վարդապետութեան ի
 Հայս. Վիեննա 1878, էջ 80—90. Մկրտիչ կպ.
 Աղանուսի, Միարանք եւ այցելուք հայ Երուսա-
 ղէմի. Երուսաղէմ 1929, էջ 127—130: